ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.5-2-24
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հուլիսի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան		ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ. Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 5 (հինգ) հայտ՝
   - «Հյուրընկալ Օջախ» ՍՊԸ-ի,
   - «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
   - «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
   - «ԳՈԹՈՒԸԴՎԵՆՉԸՐՍ» ՓԲԸ-ի,
   - «ՖԵԸՐԻԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 4 (չորս) կազմակերպությունների՝

- «Հյուրընկալ Օջախ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «ՖԵԲՐԻԼԵՆԴ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.4.1-2.4.3 կետերով սահմանված պահանջներին:

Մեկի՝

- «ԳՈԹՈՒԸԴՎԵՆՉԸՐՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Որոշեցին՝

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 4 (չորս) կազմակերպությունների՝

- «Հյուրընկալ Օջախ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «ՖԵԲՐԻԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«ԳՈԹՈՒԸԴՎԵՆՉԸՐՍ» փակ բաժնետիրական ընկերությունը**:

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար՝

- **«ԳՈԹՈՒԸԴՎԵՆՉԸՐՍ» ՓԲԸ**-ի հետ՝ **49.895.600** (քառասունինը միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ. Սահակյան -

Ա.Սողբաթյան -

Շ.Հովսեփյան -